ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1332-Ն ՈՐՈՇՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	**Միջոցառումը**	**2019 թվականին ակնկալվող արդյունք**	**Կատարված աշխատանքներ**	**Պատասխանատու մարմինը**	**2019թ. վերստուգիչ ցուցանիշը (առկայության դեպքում)**	
1.	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամներն ընտրվել են, հանձնաժողովը կազմավորվել է: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատակազմը ձևավորվել է և ապահովում է հանձնաժողովի աշխատանքների բնականոն գործունեությունը: Հանձնաժողովին տրամադրվել է առանձին տարածք, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում, պատասխանատվություն կիրառելու համար անհրաժեշտ գործիքակազմ:	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կազմավորվել է 2019 թվականի նոյեմբերի 20-ին: Հանձնաժողովի բնականոն գործունեության ապահովման նպատակով Երևան քաղաքի Կորյունի 15-17-19 հասցեում գտնվող 3-րդ մասնաշենքում տրամադրվել է 1112.1 մ^2 տարածք: Ներկայումս բանակցություններ են տարվում շահագրգիռ մարմինների հետ տարածքը շահագործման համար պիտանի տեսքի բերելու և Հանձնաժողովի տեղափոխումը տվյալ տարածք կազմակերպելու	ՀՀ արդարադատության նախարարություն Վարչապետի աշխատակազմ ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ)	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ձևավորվել է:	✓[1]

[1] Պայմանական նշաններ՝
✓ Կատարված է
! Կատարված է մասնակի
- Կատարված չէ

			նպատակով: Հանձնաժողովն ունի բյուջետային ֆինանսավորում, պատասխանատվություն կիրառելու համար անհրաժեշտ գործիքակազմ: Ինչ վերաբերում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատակազմի ձևավորվմանը՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակազմը գործում է մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների ձևավորումը: Ուստի, կառուցվածքի հաստատումից հետո միայն հնարավոր կլինի կազմավորել նոր աշխատակազմ: Հարկ է նաև նշել, որ ներկայումս առկա է ԲՊԱԷՀ-ի աշխատակազմը, որն ապահովում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատանքների բնականոն գործունեությունը:	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)		
2.	Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման,	Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման նպատակով մշակվել է առաջարկությունների փաթեթ և ներկայացվել է ՀՀ վարչապետի	Առաջարկությունների փաթեթը ներկայացվել է վարչապետի աշխատակազմ: Միաժամանակ, հաշվի առնելով այն	ՀՀ արդարադատության նախարարությ		✓

	քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում	աշխատակազմ:	հանգամանքը, որ ռազմավարության վերջնական տեքստային տարբերակում արդեն իսկ նախանշվել և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում, ինչպես նաև շահագրգիռ կողմերի մասնակցությամբ այլ հանդիպումների ընթացքում բազմիցս քննարկվել էին Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման նպատակով մշակված առաջարկությունները՝ ՀՀ արդարադատության նախարարությունը, գործընթացի հրատապության անհրաժեշտությունից ելնելով մշակել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը: Նախագծերը ներկայացել են հանրային քննարկման և հասանելի են հետևյալ հղումով՝ https://www.e-draft.am/projects/2256: Նախագծերն ուղարկվել են պետական մարմիններին կարծիքի:	ուն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ ոստիկանություն ՀՀ ֆինանսների նախարարություն		
3.	Հակակոռուպցիոն	Ուսումնասիրվել է հակակոռուպցիոն	Ուսումնասիրվել է հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների	ՀՀ արդարադատո		✓

	մասնագիտացված դատարանների ստեղծում	մասնագիտացված դատարանների վերաբերյալ միջազգային փորձը: Մշակվել և ՀՀ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ:	վերաբերյալ առկա միջազգային փորձը, որի հիման վրա ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հակակոռուպցիոն դատարանների ստեղծման վերաբերյալ առանձնահատկությունները ներառված են նաև ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» N 1441-Լ որոշմամբ, ինչպես նաև այն հանգամանքը, որ բազմաթիվ հանդիպումների ընթացքում քննարկվել են մասնագիտացված դատարանների ստեղծման վերաբերյալ առաջարկությունները, հարցի հրատապությունից ելնելով՝ ներկայումս արդեն մշակման փուլում է գտնվում մասնագիտացված դատարաններիի ստեղծմանն ուղղված օրենսդրական նախագծերի փաթեթը:	ության նախարարություն ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ) Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ) Արդարադատության ակադեմիա		
4.	ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն	Մշակվել է ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության	Մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել համապատասխան առաջարկությունների	ՀՀ Գլխավոր դատախազութ		✓

	հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծում	նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծմանն ուղղված առաջարկությունների փաթեթ:	փաթեթը: Արդարադատության նախարարությունը ՀՀ Գլխավոր դատախազության հետ համատեղ քննարկել է Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծմանն ուղղված առաջարկությունները: Առաջարկությունների փաթեթը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Արդյունքում, ՀՀ Գլխավոր դատախազությունում ստեղծվել է կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողության իրականացման իրավասու ստորաբաժանում՝ Կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն: Վարչությունը տվյալ պահին համալրված է 8 հաստիքային աշխատակցով: Միաժամանակ, հարկ է նշել, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծումից հետո նախատեսվում է, որ տվյալ վարչության դատախազներն անցնելու են բարեվարքության ստուգում, որից հետո միայն կշարունակեն պաշտոնավարել:	յուն (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն Արդարադատության ակադեմիա		

6.	Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում	Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների իրականացման գործընթացին աջակցություն ցուցաբերելու նպատակով, իրականացրել է դոնորների համակարգման հանդիպում: Հանդիպման արդյունքները հրապարակվում են:	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր ընդունված դատական և իրավական, ինչպես նաև հակակոռուպցիոն ոլորտների բարեփոխումների ռազմավարությունների ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն էր առաջացել միասնական հանդիպման կազմակերպման՝ 2019 թվականին հոկտեմբերի 8-ին կայացած դոնորների համակարգման բարձր մակարդակի հանդիպմանը մասնակցել է ՀՀ արդարադատության նախարարը: Քննարկումների և պայմանավորվածությունների արդյունքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ, մասնավորապես՝ ➢ Եվրոպական միության հետ մեկնարկում է առաջիկա բյուջետային աջակցության ծրագրի շրջանակի հստակեցումն ու համապատասխան ուղղությունների կանխորոշումը: ➢ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ քննարկման ընթացքում են կարճաժամկետ ու երկարաժամկետ գործողությունների տրամաբանությունը, որոնք ներառելու են և՛ դատաիրավական, և՛ հակակոռուպցիոն ոլորտները: ➢ ԱՄՆ ՄԶԳ հետ արդեն վերջնականացվում է կարճաժամկետ աջակցության շրջանակը, քննարկվում են միջնաժամկետ ներգրավման հնարավոր ուղղությունները և այլն:	ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Իրականացվել է տարեկան առնվազն 1 դոնորների համակարգման նիստ, առկա են նիստերի արձանագրությունները, մամլո հաղորդագրությունները տարածված են:	!

9.	Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուներ, դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում	Բարեվարքության կանոնների պահպանման վերաբերյալ միջազգային փորձն ուսումնասիրվել է, ներկայացվել են համապատասխան առաջարկություններ: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել և ներկայացվել է ՀՀ ՀՀ Ազգային ժողով:	Բարեվարքության կանոնների պահպանման միջազգային փորձն ուսումնասիրվել է, որի հիման վրա ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե՛ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում, և թե՛ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ այլ հանդիպումների ընթացքում բազմիցս քննարկվել էին բարեվարքության համակարգերի նախատեսման առանձնահատկությունները՝ կառավարությունը ձեռնամուխ է եղել օրենսդրության մշակմանը: Մշակվել և Ազգային ժողովի կողմից սույն թվականի սեպտեմբերի 13-ին ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով Հանձնաժողովին վերապահվել է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ վարչապետի աշխատակազմ ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ Քննչական կոմիտե (համաձայնությ		✓

			Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատավորների և դատավորների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման: Միաժամանակ, ներկայումս մշակման փուլում են գտնվում օրենքից բխող կառուցակարգերը սահմանող իրավական ակտերը:	ամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն		
10.	«Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման արդյունավետության գնահատում	2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերն ընդունվել են:	Ընդունվել են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի մեծամասնությունն ընդունվել է: Կախված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորման ժամկետից և վերջիններիս կողմից մի շարք նախագծեր Կառավարության հաստատմանը ներկայացնելու օրենսդրական պահանջից՝ որոշ նախագծեր ներկայումս գտնվում են միջգերատեսչական քննարկման փուլում և մոտակա ժամանակահատվածում	ՀՀ Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)	«Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներից բխող ենթաօրենսդրական ակտերի 100%-ն ընդունված է:	![2]

[2] Շուրջ 80 %

			կներկայացվեն հանրային քննարկման:	Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)		
12.	Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխում	Ուսումնասիրվել են պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարելավման հիմնական ուղղությունները	Վարձատրության համակարգի բարելավման հիմնական ուղղություններն ուսումնասիրվել են: Ուսումնասիրությունների արդյունքում մշակված առաջարկությունները ներառվել են Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության նախագծում: Նախագիծը դեռևս գտնվում է քննարկման փուլում:	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքա-ցիական ծառայության գրասենյակ	Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններզբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարելավման ուղղությունների ու ծախսերի հաշվարկի վերաբերյալ վերլուծության հիման վրա մշակված միջոցառումները հաստատվել են Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության շրջանակներում 2019 թ.	!
14.	Պատգամավորի,	Միջազգային փորձն ուսումնասիրվել	Ներկայումս բանակցություններ են	Կոռուպցիայի		!

	քննիչի վարքագծի կանոնների սահմանում	է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ	տարվում միջազգային գործընկերների հետ պատգամավորի վարքագծի կանոնների սահմանման ուղղությամբ: Միաժամանակ, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի «ՀՀ կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները հաստատելու մասին» հրամանի նախագիծը գտնվում է մշակման փուլում:	կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ) Քննչական մարմիններ (համաձայնությամբ)		
17.	Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում: Ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրում	Կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ: Ուսումնասիրության հիման վրա «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է և ներկայացվել Վարչապետի	Կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն, որի հիման վրա մշակված առաջարկությունների փաթեթը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտարարագրման համակարգի բարեփոխմանն ուղղված առաջարկությունները քննարկվել են բանավոր կարգով և Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման խորհրդի նիստերում, և այլ հանրային քննարկումների և պետական մարմինների հետ հանդիպումների ընթացքում՝ արդարադատության	ՀՀ արդարադատության նախարարություն Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությ	Միջազգային փորձի ուսումնասիրությունը համապատասխան առաջարկություններով ներկայացվել ու քննարկվել է Հակակոռուպցիոն խորհրդում (2019թ.)	✓

		աշխատակազմ:	նախարարությունը ձեռնամուխ է եղել համապատասխան իրավական ակտերի մշակմանը: 2019 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքների և հարակից օրենքների նախագծերի փաթեթում ներառվել է նաև «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որն ուղղված է նաև գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործմանը: Մասնավորապես, նախագծով առաջարկվում է ընդլայնել «ընտանիքի անդամ» հասկացությունը, ներդնել իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու ինստիտուտը:	ամբ) (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով) (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)		

			Հայտարարագրման համակարգի արդյունավետության բարձրացման տեսանկյունից նախագծով առաջարկվում է նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տրամադրել բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին հասանելիություն: Նախագիծը ներառված է Ազգային ժողովի հեթական նստաշրջանի օրակարգում: Զուգահեռաբար մշակվել, շրջանառության մեջ է դրվել, ինչպես նաև ներկայացվել հանրային քննարկման «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի մեկ այլ նախագիծ, որով առաջարկվում է ամբողջությամբ վերափոխել հայտարարագրման համակարգը, ընդլայնել հայտարարագրման բովանդակությունը և հայտարարատուների շրջանակը, ներդնել ծախսերի հայտարարագրման ինստիտուտը: Նախագծով Կառավարության ծրագրի համատեքստում սահմանվում է այնպիսի նոր համակարգ ներդնելու հնարավորության դիտարկումը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնի հավակնող և նման պաշտոն զբաղեցնող			

			անձինք նոտարական կարգով կլիազորեն համապատասխան լիազոր մարմնին՝ աշխարհի ցանկացած բանկում և ֆինանսական կազմակերպությունում, ցանկացած երկրի տարածքում իրենց անունից փնտրել և ստանալ տեղեկություններ իրենց անունով հաշվեհամարների առկայության, ստեղծման օրից դրանց շարժի և մնացորդի, ինչպես նաև իրենց անունով շարժական, անշարժ գույքի և արժեթղթերի առկայության մասին:			
19.	Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում, նվերների ռեեստրի ստեղծում	Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտը վերլուծվել է, վեր են հանվել առկա խնդիրները, մշակվել դրանց կարգավորմանն ուղղված առաջարկությունների փաթեթ:	Մշակվել և վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի վերլուծության իրականացման և առաջարկությունների արդյունքում՝ ինստիտուտի կատարելագործման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի	ՀՀ արդարադատության նախարարություն Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ) (Կոռուպցիայի կանխարգելման	Միջազգային փորձի ուսումնասիրությունը համապատասխան առաջարկություններով ներկայացվել ու քննարկվել է Հակակոռուպցիոն խորհրդում (2019թ.)	!

			Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքների և հարակից օրենքների նախագծերի փաթեթի շրջանակներում մշակվել է համապատասխան օրենքի նախագիծ: Նախագծերի փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի նիստում: Միաժամանակ, մշակվել և առաջիկա օրերին հանրային քննարկման կներկայացվի «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված նվերները հաշվառելու և հանձնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:	հանձնաժողով) (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)		
22.	Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում	Ուսումնասիրվել է մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության վերաբերյալ միջազգային փորձը: Ուսումնասիրության արդյունքները քննարկվել են գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ:	Մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության վերաբերյալ առկա միջազգային փորձը ուսումնասիրվել է: Ներկայումս աշխատանքներ են տարվում ՀՀ-ում կորպորատիվ կառավարման կանոնագրքի վերանայման ուղղությամբ: Մասնավորապես, նոր նախագծով նախատեսվում է ստեղծել կազմակերպության կորպորատիվ էթիկան կառավարելու և	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն		!

			հակակոռուպցիոն համապատասխանությունն ապահովելու հանձնառություն ունեցող խորհուրդ Նախագիծը ներկայացվել է շահագրգիռ մարմինների քննարկմանը, ստացվել են կարծիքներ, որոնց հիման վրա Նախագիծը լրամշակել է և տեղադրվել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ e-draft համակարգում: Նախագծի ընդունման աշխատանքները ներկայումս գտնվում են ավարտական փուլում: Վերջինիս ընդունումից հետո նախատեսվում է կորպորատիվ կառավարման կանոնակարգի ներդրման մեխանիզմների մշակում՝ համագործակցելով մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ:	Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)		
27.	Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում	Կատարվել են www.e-draft.am հարթակի արդիականացմանն ուղղված աշխատանքներ	2019 թվականի ընթացքում կատարվել է իրավական ակտերի նախագծերի միասնական հարթակի արդիականացման հնարավորության ուսումնասիրություն և կազմվել է տեխնիկական նկարագիրը: Ներկայումս իրավական ակտերի նախագծերի միասնական հարթակի արդիականացման ֆինանսավորման վերաբերյալ իրականացվում են բանակցություններ միջազգային դոնոր	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության		!

			կազմակերպությունների հետ:	նախարարություն Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)		
28.	Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի	Ուսումնասիրվել է պետական մարմիններում քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների շրջանակը	Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ հավաքագրվել է տեղեկատվություն, իրականացվել է ծառայությունների նախնական գույքագրում: Ընթացքի մեջ է գտնվում վերջնական գույքագրման գործընթացը և բիզնես գործընթացների ուսումնասիրությունը: Մշակվել է ծառայությունների մատուցման միասնական հարթակի ստեղծման Տեխնիկական	ՀՀ Վարչապետի աշխատակազմ Պետական կառավարման համակարգի մարմիններ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների	Պետական մարմիններում քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների շրջանակի վերաբերյալ ուսումնասիրություն իրականացվել է:	!

	ներդրում՝ այդ թվում դիմումների լրացման օրինակելի ձևերի մշակում		առաջադրանքը, քննարկվել է դոնոր գործընկերների հետ: 2020 թվականի փետրվարին կմեկնարկի հարթակի ստեղծման աշխատանքները, որոնց ընդհանուր տևողությունը կլինի 24 ամիս: Հարթակի ներքո կգործի նաև քաղաքացիներին ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկությունների տրամադրման գործիքակազմը: *Մշակութային արժեքների և մշակու-թային նշանակության առարկաների արտահանման գործընթացների հետ կապված իրավական ակտերը տեղադրված են նախարարության կայքում, իսկ դրանցում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տեղադրումը կայքէջում ընթացքի մեջ է: Մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների արտահանման գործընթացի վերաբերյալ տեղեկույթի տեղադրումը կայքում հնարավորություն է տալիս ծառայությունը ստացող քաղաքացիներին մինչև պետական լիազոր մարմին այցելելը տեղեկա-տվություն ստանալ գործընթացի ընթացքի, պահանջվող փաստաթղ-թերի, կատարման ժամկետների, ինչպես նաև*	ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)		

			ծառայության համար պահանջվող պետական տուրքի վճարի վերաբերյալ: Նախատեսվում է նաև ընթացակարգի համառոտ՝ ըստ քայլերի, տեղադրումը կայքում: *Ավարտական փուլում է գտնվում ԿԳՄՍ նախարարության նոր կայքի գործարկումը: Բովանդակային համալրումն արդեն արված է, տեխնիկական և անվտանգության փորձաքննության ավարտից հետո, նախատեսվում է կայքի շահագործումը: Նոր կայքը ապահովում է առցանց դիմելու, փաստաթղթեր ներբեռնելու հնարավորություն:* *ԿԳՄՍ նախարարի հրամանով, ազդարարման համակարգի տեղայնացման նպատակով նշանակվել է ներքին և արտաքին ազդարարման համակարգի պատասխանատու: Այն հրապարակված է պաշտոնական կայքում՝ http://edu.am/index.php/am/documents/download/7845* *Աշխատանքային բոլոր օրերին անընդմեջ գործել է «Թեժ գիծ» հեռախոսակապը:* *Հիմք ընդունելով քաղաքացիների կողմից «Թեժ գիծ» հեռախոսակապով հաճախ բարձրացվող հարցերը՝ Ֆեյսբուք*			

			սոցիալական ցանցի ԿԳՄՄՆ պաշտոնական էջում մեկնարկել է «Դուք հարցնում եք, մենք պատասխանում ենք» նախագիծը, որի շրջանակում տրվել են հանրային հետաքրքրություն ներկա-յացնող հարցերի վերաբերյալ հան-գամանալից պատասխաններ՝ https://bit.ly/2Rjtr0D , https://bit.ly/2Rh2CdA Շահագործվել է Երևան քաղաքի պետական հանրակրթական դպրոցներում առաջին դասարանցիների ընդունելության օնլայն համակարգը, որի հղումը տեղադրված է նախարարության պաշտոնական կայքում: Կիրառվել է միասնական https://www.e-license.am/am/ էլեկտրոնային գրանցամատյան, որը նպաստում է արդյունավետ վարչարարության իրակա նացմանը, քաղաքացիների մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, ծախսերի և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: ՀՀ կառավարության <<Մեկ կանգառ մեկ պատուհան>> սկզբունքն ապահովելու նպատակով լիցենզավորվող իրավաբանական անձանց հայտերը, լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը ուղարկվել են info@edu.am, secretariat@edu.am կայք			

			էջերի և ՀՀ էլեկտրոնային միասնական կառավարման e-gov.am համակարգի միջոցով, որը հանգեցրել է հանրության իրազեկման աստիճանի բարձրացմանը, ինչն էլ նպաստել է լիցենզավորման թափանցիկության, հաշվետվողականության, տվյալների անփոփոխելիությանը և ավտոմատացման ապահովմանը: *Շարունակվել է բացառապես էլեկտրոնային համակարգի միջոցով լիցենզիաներ ստանալու համակարգի ներդրման գործընթացը /նախկին փոստայի կամ առձեռն թղթային կամ էլեկտրոնային տարբերակների փոխարեն (ՀՀ կառավարության 24.09. 2010թ N 1283-Ն, 30.08. 2012թ N 1104-Ն, 4.06.2014թ N 588-Ն որոշումներ):*			

32.	ՀՀ քրեական օրենսգրքով կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի հստակեցում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ՝ սահմանելով կոռուպցիոն հանցագործությունների կողմնորոշիչ ցանկը:	Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ միջազգային փորձն ուսումնասիրվել է[3]: Մշակվել և 2019 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել և Ազգային ժողով է ներկայացվել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ՝ որով նախատեսվում է ՀՀ քրեական օրենսգրքում առանձին Հավելվածի միջոցով սահմանել կոռուպցիոն հանցագործությունների ցանկը:[4]	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ վարչապետի աշխատակազմ ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ Քննչական կոմիտե	Ապահովվել է կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի ուղենիշային սահմանումը՝ ըստ ՏՀՀԿ հակակոռուպցիոն ցանցի, ԵԽ ու ԵՄ փորձագետների առաջարկությունների	✓

[3] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծերի հիմնավորումը՝ http://www.parliament.am/draft_docs7/K-428_himnavorum.pdf

[4] Տե՛ս http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=55991

				(համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ոստիկանություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե		
37.	Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծում	Միջազգային փորձն ուսումնասիրվել է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ՀՀ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ:	Միջազգային փորձն ուսումնասիրվել է: Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն արդեն նախաձեռնել է աշխատանքները և ներքին աշխատանքային քննարկումներ են տեղի ունենում՝ ռեեստրի ձևավորման հնարավոր մոտեցումները ճշգրտելու համար:	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի վերաբերյալ միջազգային փորձն ուսումնասիրվել և քննարկվել է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում	!

39.	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում	Ուսումնասիրվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և վերադարձման վերաբերյալ ՀՀ օրենսդրության կարգավորումները և դրանց համապատասխանությունը ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի պահանջներին: Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակվել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն մասին» օրենքի նախագիծ:	Կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և վերադարձման վերաբերյալ ՀՀ օրենսդրական կարգավորումների և Միջազգային համաձայնագրերին դրանց համապատասխանության վերաբերյալ:[5] Մշակվել,շահագրգիռ կողմերի հետ քննարկվել և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի նիստում հավանության են արժանացել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումների կատարելու մասին օրենքների նախագծերը[6]: Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է կատարելագործել ապօրինի ծագում ունեցող գույքը տնտեսական շրջանառությունից հանելու օրենսդրական գործիքակազմը: Նախատեսված իրավական մեխանիզմը թույլ է տալիս բռնագանձել գույքը, որի ձեռքբերումը նախագծով նախատեսված	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ Կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	Ապօրինի ակտիվների բռնագանձման և վերադարձման վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացվել է, առաջարկությունները քննարկվել են	✓

[5] Տե՛ս «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին ՀՀ օրենքի» և «Հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի հիմնավորումը http://www.parliament.am/draft_docs7/K-438-438-14_Himnavorum.pdf

[6] Տե՛ս http://www.parliament.am/drafts.php?sel=introduction&lang=arm Կ-438-10.01.2020-ՊԻ-011/0- Կ-438[14]-10.01.2020-ՊԻ-011/0 http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=56066

			էական ծավալներով չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրներով, նախագիծը ներմուծում է չհիմնավորվող հարստացման բռնագանձման մեխանիզմ:			
42.	Հանրային իրազեկման տարեկան արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում	Հաղորդակցման ռազմավարությունն ու համապատասխան գործողությունների ծրագիրը մշակվել ու ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ	Հաղորդակցման ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մշակման նպատակով արդարադատության նախարարությունը 2019 թվականի դեկտեմբերի սկզբին դիմել է պետական մարմիններին՝ իրենց իրավասության շրջանակներում գործողությունների ծրագրում ներառվելիք միջոցառումներ ներկայացնելու նպատակով: Այս պահի դրությամբ դեռևս պետական մարմինների կողմից ներկայացվում են առաջարկություններ, որոնք ամփոփելուց հետո միայն հնարավոր կլինի մշակել նախագիծը: Միաժամանակ, առավել համապարփակ հաղորդակցման ռազմավարության մշակման նպատակով՝ արդարադատության նախարարությունը համագործակցում է ՄԱԿԶԾ-ի հետ:	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ Վարչապետի աշխատակազմ Պետական կառավարման համակարգի մարմիններ Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) Զանգվածային		!

				լրատվության միջոցներ (համաձայնությամբ)		
43.	«Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում	Մշակվել են «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի դասավանդման ծրագրերը:	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության բոլոր մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներում և մոդուլային ծրագրում ներառված է «Իրավունքի հիմունքներ» մոդուլը, որը դասավանդվում է բոլոր ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում: Վերոնշյալ մոդուլի դասավանդման ընթացքում անդրադարձ է կատարվում նաև հակակոռուպցիոն քաղաքակա-նության վերաբերյալ թեմաներին: Հաշվի առնելով, որ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատվել է 2019թ. հոկտեմբեր ամսին, նախատեսվում է շրջաբերական գրությամբ տեղեկացնել բոլոր ՆՄՄԿ ուսումնական հաստատություններին «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» թեմայով մշակել ուսումնական ծրագիր՝ «Իրավունքի հիմունքներ» մոդուլում պարտադիր ներառելու նպատակով, որը 2020-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ԲՈՒՀ-եր Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ		!

			2021ուս. տարվանից կուսուցանվի բոլոր հաստատություններում: Համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ կետի՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական ազատությունները և ինքնավարությունը խթանելն ու զարգացնելը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից է: Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված է՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակումն ու հաստատումը, ուսումնական գրականության և ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակումը բարձրագույն ուսումնական հաստատության իրավասությունն է: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվել է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» **<u>թեմայի</u>** ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների			

			դասավանդման մոդուլներում: Հարկ է նշել նաև, որ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ուսումնական պլաններում 2020-2021թթ. ուսումնական տարվանից նախատեսվում է ներառել «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան:			
44.	Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում	Ավագ դպրոցում ուսուցանվող «Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների վերաբերյալ կատարվել է ուսումնասիրություն: Ներկայացվել է համապատասխան առաջարկությունների փաթեթ:	Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության բաղադրիչը ներառելու նպատակով հանրակրթության առարկայական չափորոշիչները վերանայող, 2019 թվականին ձևավորված աշխատանքային խմբերն իրականացնում են համապատասխան մշակումներ: Մշակվող ծրագրերով թեմայի շուրջ քննարկումներ նախատեսվում են նաև միջին դպրոցում:	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ԲՈՒՀ-եր		!
45.	Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում	Մշակվել են իրազեկվածության բարձրացման ուղեցույցները, վերապատրաստման ծրագրերը:	Արդարադատության նախարարությունն իր իրավասության շրջանակներում մշակել է իրազեկվածության բարձրացման վերապատրաստման ծրագրեր: Անցկացվել են իրազեկվածության բարձրացմանն ուղղված վերապատրաստումներ: Մասնավորապես 30.09.2019-25.10.2019 թվականներին անցկացվել է Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքա-ցիական ծառայության գրասենյակ ՀՀ արդարադատության նախա-		✓

	կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության, «Մարդու իրավունքներ» թեմայով		պատասխանատուների վերապատրաստում: Վերապատրաստման դասընթացներին մասնակցել են ՀՀ Պետական կառավարման համակարգի մարմինների 49 քաղաքացիական ծառայողներ: Հարկ է նշել նաև, որ Քաղաքացիական ծառայողների շրջանում քաղաքացիական ծառայության նոր օրենսդրության վերաբերյալ մշակվել են վերապատրաստման ծրագրեր: Կազմակերպվել են վերապատրաստումներ: Բարեվարքության հարցերով կազմակերպիչների, մրցութային հանձնաժողովների անդամության թեկնածուների, էթիկայի հանձնաժողովի անդամության թեկնածուների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ: «Մարդու իրավունքներ» թեմայով մշակվել են վերապատրաստման ծրագրեր, հեռավար ուսուցման մոդուլներ: Հանրային ծառայողների շրջանում էթիկայի կանոնների վերաբերյալ մշակվել են վերապատրաստման ծրագրերը: Մշակվել է իրազեկվածության բարձրացմանն ուղղված «Քաղաքացու	րարություն Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)		

			ուղեցույց», որը տեղադրված է Քաղաքացիական ծառայության գրասենյակի ֆեյսբուքյան էջում: ՄԱԶԾ-ի հետ համատեղ իրականացվել են իրազեկվածության բարձրացմանն ուղղված մի շարք նախաձեռնություններ, մասնավորապես. «Իրազեկ ԶԼՄ, իրազեկ քաղաքացի» սեմինար քննարկում ԶԼՄ-երի ներկայացուցիչների հետ, ՔԾԳ աշխատակազմի կարողությունների հզորացման և բարեփոխումների ռազմավարության ներկայացման նպատակով՝ «Մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից մեթոդներ և մոտեցումներ» խորագրով երկօրյա աշխատանքային սեմինար-վերպատրաստում: 379-ը քաղաքացիական ծառայող վերապատրաստվել է «Էթիկայի հանձնաժողովի անդամներին անհրաժեշտ հմտություններ», «Բարեվարքության հարցերով կազմակերպիչներին անհրաժեշտ հմտություններ» և «Ծառայողական քննությունը որպես քաղաքացիական ծառայության արդյունավետության բարձրացման բաղադրիչ» թեմաներով: 38 քաղաքացիական ծառայող վերապատրաստվել է «Իրավունքի			

			գերակայությունը որպես հանրային ծառայության հիմնաքար և քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը» թեմայով:			
48.	Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում,	Մշակվել է կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման մեթոդաբանություն:	Ուսումնասիրությունների հիման վրա մշակվել է հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման մեթոդաբանություն:	ՀՀ Վարչապետի աշխատակազմ ՀՀ արդարադատության նախարարություն Պետական կառավարման համակարգի մարմիններ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (Համաձայնությամբ)		✓

				Հասարակական կազմակերպություններ (Համաձայնությամբ)		

2019 թվականի ընթացքում կատարման ենթակա միջոցառումների քանակը	Ամբողջությամբ կատարված	*Մասնակի կատարված*	*Չկատարված*
22	**10** **(45.4%)**	**12** **(54.6%)**	**0**